«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ - ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ:
ԱՌԱՐԿԱ	ՆՀՊ
ՀԵՂԻՆԱԿ	ՎԱՀԱՆ ՍՏԵՓԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄԱՐԶ	ԵՐԵՎԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1 ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

1.1 Դիվերսիոն-հետախուզական խմբերի նշանակությունը և կազմը:..... 4

1.2 Դիվերսիոն-հետախուզական խմբերի խնդիրները և գործողությունների կարգը հակառակորդի ռազմավարական նշանակության օբյեկտները ոչնչացնելիս կամ շարքից հանելիս 5

1.3 Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարի հիմունքները 8

1.4 Հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարում ուժերի և միջոցների կիրառման բնութագիրը և պայմանները 9

ԳԼՈՒԽ 2 ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ (ՀԵՆԱԿԵՏՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ 21

2.1 Մարտական դիրքի հակադիվերսիոն կահավորման օրինակելի ուրվագծի ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 26

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի մշակման ժամանակ ուսումնասիրվել է հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարի վերաբերյալ ՌԴ-ի և այլ օտարերկրյա (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա) ռազմական գրականության, ինչպես նաև Աֆղանստանի, Չեչնիայի, Արցախյան պատերազմների ժամանակ իրականացված գործնական օրինակները:

Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զորախմբավորումների ռազմավարական և մարտավարական նպատակները սպասվելիք պատերազմում (դա են հաստատում 44 օրյա և ապրիլյան քառօրյա մարտական գործողությունները) կարող են լինել՝ Ադրբեջանի Հանրապետության տարածքի մեծացումը Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններով, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորքերի խմբավորումների լրիվ ջախջախումը և տարածքների գրավումը:

Ռազմական գործողությունները կվարվեն Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի բոլոր զորատեսակների և զինատեսակների ընդգրկումով, օդային (հեռահար կրակային) հարվածներ հասցնելուց հետո, հատուկ նշանակության ուժերի ու միջոցների, օդադեսանտային և դիվերսիոն-հետախուզական խմբերի կիրառմամբ, նպատակ ունենալով խախտել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառավարման (ղեկավարման), ՀՕՊ համակարգերը, շարքից դուրս բերել Հայաստանի և Արցախի ենթակառուցվածքները, խուճապ ստեղծել խաղաղ բնակչության շրջանում, մեծ կորուստներ պատճառելով խոչընդոտել մեր զորքերի ծավալումը, անցնել հարձակման՝ նպատակ ունենալով մասնատել և ջախջախել զորքերի խմբավորումներն ու հասնել ռազմավարական նպատակների կատարմանը:

Դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցումը, ելնելով խնդիրների բնույթից, անձնակազմի քանակից, բնակլիմայական պայմաններից և տեղանքից, կարող է իրականացվել օդով և ցամաքով, որոնց գործողությունների ժամկետները կարող են լինել 3-5 օրից մինչև 30-40 օր:

Հետազոտական աշխատանքում արտացոլված են հակառակորդի կողմից դիվերսիոն-հետախուզական խմբերի (ԴՀԽ) կիրառման հավանական տարբերակները, հայացքները և տեսակետները: Քննարկված են խնդիրներ, որոնք ԴՀԽ-ներն ունենում են հարձակողական մարտերի անցկացման ընթացքում, դրանց լուծման ուղիները և այն ուժերն ու միջոցները որոնք անհրաժեշտ են պաշտպանության խորքում դրանց ոչնչացման համար:

ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Դիվերսիոն-հետախուզական խմբերի նշանակությունը և կազմը:

Դիվերսիոն-հետախուզական խմբերը նախատեսված են մարտական գործողություններից առաջ, դրանց ընթացքում և ավարտից հետո հակառակորդի թիկունքում դիվերսիոն-հետախուզական գործողություններ կատարելու և նրա մասին տեղեկություններ ձեռք բերելու նպատակով:

Մարտական գործողություններից (պատերազմից) առաջ դիվերսիոն-հետախուզական խմբերի հիմնական խնդիրներն են՝ հայտնաբերել հակառակորդի զորքերի կուտակումները, զենքի, զինամթերքի, սննդամթերքի, իրային միջոցների պահեստավորման խոշոր կենտրոնները, այնտեղ կատարել դիվերսիոն գործողություններ, դրանով իսկ թույլ չտալ հակառակորդին սկսելու մարտական գործողությունները կամ թուլացնել նրա պաշտպանությունը:

Մարտական գործողությունների (պատերազմի) ընթացքում դիվերսիոն-հետախուզական խմբերի հիմնական խնդիրն է՝ ոչնչացնել կամ շարքից հանել հակառակորդի ղեկավարման կետերը, զանգվածային ոչնչացման միջոցները, երկաթուղային հանգույցները, օդանավակայանները և այլ ռազմական ու քաղաքացիական օբյեկտներ, որոնք ռազմավարական նշանակություն ունեն:

Մարտական գործողություններից (պատերազմից) հետո դիվերսիոն-հետախուզական խմբերի խնդիրն է՝ պարզել հակառակորդի մարտից դուրս եկած խմբավորումների կազմը, դրանց հավաքման (կենտրոնացման) շրջանները, հետագա գործողությունների բնույթը և նպատակը:

Դիվերսիոն-հետախուզական խմբերի կազմը և կառուցվածքը կախված է տրված խնդրից, առկա ուժերից և միջոցներից, հատուկ հետախուզության օբյեկտի պահպանության կազմից և այլ հանգամանքներից:

Դիվերսիոն-հետախուզական խումբը կարող է կազմված լինել հետևյալ ենթախմբերից.

- հարձակման ենթախումբ,
- կրակային աջակցման ենթախումբ (ենթախմբեր),
- հատուկ գործողություններ (պայթեցում, հրդեհում, վնասում և այլ) իրականացնող ենթախումբ:

1.2 Դիվերսիոն-հետախուզական խմբերի խնդիրները և գործողությունների կարգը հակառակորդի ռազմավարական նշանակության օբյեկտները ոչնչացնելիս կամ շարքից հանելիս

Զորքերի կառավարման խաթարումը

Դրանք դիվերսիոն-հետախուզական խմբերի որոշակի գործողություններն են, ուղղված՝

- հակառակորդի կապի միջոցների և ուղիների ոչնչացմանը,
- որոշակի ժամանակահատվածում կապի խաթարումը ապահովող սարքավորումների տեղադրմանը,
- տարբեր մեթոդներով ապատեղեկատվության տարածմանը, օրինակ. կապի միջոցներին միանալով, բնակչության մեջ սխալ տեղեկատվության տարածումով,
- հեռահաղորդակցության ուղիների և միջոցների շարքից հանելով և այլն:

Հակառակորդի կարևոր օբյեկտների հետախուզումը

Հակառակորդի կարևոր օբյեկտների հետախուզման տակ հասկանում ենք ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների մասին տեղեկությունների հավաքումը և հայտնումը գլխավոր ուժերին: Տեղեկությունները հավաքվում են տեղանքի, գյուղերի, քաղաքների ճանապարհների և որպես կողմնորոշիչ հանդիսացող այլ օբյեկտների դիտարկումով և նկարահանումով: Ելնելով սեփական դիտարկումից և այլ աղբյուրներից ստացված տեղեկություններից (արտաքին հետախուզություն, արբանյակներից ստացված տեղեկություններից և այլն) անցկացվում է ռազմական օբյեկտների որոնումը և դրանց դիտարկումը, որոնց թվին են պատկանում. հրթիռների արձակման կայանքները, պաշտպանական կառույցները, զինվորական կայազորները և այլն: Կարևոր նշանակություն ունեցող օբյեկտներ կարող են հանդիսանալ նաև որոշակի քաղաքացիական օբյեկտներ, որոնք ունեն ռազմավարական նշանակություն, օրինակ. հիվանդանոցները, գործարանները, հեռուստատեսային և ռադիո կայաններն ու աշտարակները և այլն:

Դիվերսիաների իրականացումը

Դիվերսիաների իրականացումը նպատակ ունի հակառակորդի ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների ոչնչացումը կամ շարքից հանումը պայթեցումների, հրդեհումների, տարատեսակ սարքավորումների վնասումներով և նմանատիպ այլ գործողություններով: Դիվերսիաների օբյեկտներ կարող են հանդիսանալ՝

- ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերական հիմնարկ - ձեռնարկությունները,
- հիդրոէլեկտրակայանները,

- ջերմաէլեկտրակայանները,
- ատոմակայանները,
- ջրամբարները,
- ամբարտակները,
- գազամուղերը (նավթամուղերը) և այլն:

Դիվերսիաների նպատակ կարող է լինել նաև տեղանքի էկոլոգիական հավասարակշռության խախտումը:

Դիվերսիաների իրականացման օբյեկտների առաջնայնությունն ընտրվում է կախված գլխավոր ուժերի խնդիրներից: Դրանք կարող են լինել տարբեր՝ կախված նրանից, թե գլխավոր ուժերը կատարելու են հարձակողական, թե պաշտպանողական գործողություններ: Ցանկացած դեպքում դիվերսիայի միջոցով ռազմավարական նշանակության օբյեկտների ոչնչացումը կամ շարքից հանումը պետք է ապահովի.

- հակառակորդի զորամիավորումների (զորամասերի) մարտունակության ցածրացումը,
- հակառակորդի զորքերի կառավարման համակարգի խախտումը,
- զորքերի թիկունքային և տեխնիկական ապահովումը իրականացնելու գործընթացում խաթարումների առաջացումը,
- տնտեսական և արդյունաբերական վնասներ պատճառելով հակառակորդին ստիպի նրան հրաժարվել նախապես որոշված գործողություններից:

Հակառակորդի թիկունքում առաջնային ռազմավարական օբյեկտների ոչնչացման կամ շարքից հանման հատուկ միջոցառումների իրականացման ձևերը պետք է ապահովեն խնդրի կատարումը դիվերսիոն-հետախուզական խմբի կողմից և նրա գաղտնի հեռացումը օբյեկտից: Դիվերսիայի իրականացման ձևերն ընտրվում են կախված առաջադրանքի ծավալից, ունեցած ժամանակից, ուժերից և միջոցներից:

Հրաձգային զենքերով և նռնակներով հակառակորդի խոցումը կիրառվում է օբյեկտում առկա հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման, մարտական տեխնիկայի և սարքավորումների խոցման համար:

Ամբողջ օբյեկտի կամ դրա տարրերի պայթեցումը ականապայթուցիկ միջոցների կիրառմամբ հանդիսանում է առավել արդյունավետ ձևերից մեկը, որը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում փոքր ուժերով ոչնչացնել կամ շարքից հանել հակառակորդի համարյա ցանկացած օբյեկտը:

Հրդեհումները իրականացվում են համարյա թե նույն նպատակով, ինչ որ պայթեցումները: Հրդեհների իրականացումը առավել արդյունավետ է վառելիքաքսուքային նյութերի, ադմինիստրատիվ շենքերի, արդյունաբերական օբյեկտների, նյութատեխնիկական միջոցների մատակարարման և պահման կետերի ոչնչացման ժամանակ: Հրդեհումներն

իրականացվում են հրդեհապայթուցիկ լիցքերի և հեղուկ վառելիքի (բենզին, կերոսին, դիզելային վառելանյութ և այլն) օգտագործմամբ:

Վնասները հասցվում են հակառակորդի զորքերի մարտական գործունեության ապահովման համար կարևոր նշանակություն ունեցող հանդերձանքը, պարենը օգտագործմանը ոչ պիտանի դարձնելու նպատակով: Մատակարարման տարբեր առարկաների և պարենամթերքի վնասումը կարող է իրականացվել տարբեր ուղիներով: Օրինակ՝ վառելանյութը կարելի է դարձնել օգտագործման համար ոչ պիտանի՝ խառնելով դրա հետ տարբեր նյութեր, որոնք դժվարացնում են այրումը կամ առաջացնում են ժամանակից շուտ բռնկում:

Մեխանիկական վնասների հասցնումը կիրառվում է հակառակորդի կարևոր օբյեկտները, մարտական տեխնիկան, սպառազինությունը և տարատեսակ սարքավորումները շարքից հանելու համար: Այն կատարվում է տարբեր դետալների ջարդմամբ, հաղորդալարերի, կաբելային լարերի կտրումով, մանեկների, հեղյուսների թուլացումով և հենապյուների սղոցումով և այլն:

Ականափորում - իրականացվում է երթուղու լցաթմբված անհարթ տեղամասերում: Դրա համար շրջադարձի արտաքին կողմից փայտակոճերի տակ քանդվում է գրունտը դրանց երկարության 2/3-ի չափով:

Ռելսերի կցատեղերի թուլացումը - ռելսային միացումներում շրջադարձերի վրա 6-8 փայտակոճերի արտաքին կողմից հանվում են պտտագամերը, ռելսերը հեռացվում են իրարից այնպես, որ երկու ռելսերի միջև առաջանա 1-1,5 սմ-ոց բացվածք և այդ դիրքով ամրացնում են օգտագործելով փայտյա սեպ, որը դրվում է իրարից հեռացված ռելսերի միջև: Հեռացված կցատեղը քողարկվում է մետաղական կտորով:

Հակառակորդի առավել կարևոր օբյեկտների վրա հարձակումը

Նպատակը նույնն է, ինչ որ դիվերսիաների իրականացման ժամանակ, սակայն տարբերվում են գործողությունների մեթոդները: Եթե դիվերսիաների իրականացման ժամանակ կարևոր հանգամանք է հանդիսանում գաղտնիությունը, ապա հարձակման ժամանակ առավել կարևորվում է հակառակորդի վրա հոգեբանական ազդման հանգամանքը:

Հակառակորդի թիկունքում զանգվածային խոցման զենքի կիրառումը

Հատուկ նշանակության դիվերսիոն - հետախուզական ջոկատը կարող է առաջադրանք ստանալ օգտագործելու զանգվածային ոչնչացման զենք հակառակորդի խորը թիկունքում, խիտ բնակեցված կամ արդյունաբերական առավել կարևոր շրջաններում՝ զանգվածային կորուստներ կամ ավերածություններ առաջացնելու նպատակով: Որպես զանգվածային ոչնչացման զենք կարող են օգտագործվել փոքր հզորությամբ միջուկային լիցքեր, տարատեսակ քիմիական թունավորման նյութեր, տարբեր վտանգավոր

հիվանդություններով վարակված միջատներ, կենդանիներ, կենսաբանական միջոցներ և այլն: Զանգվածային խոցում կարելի է իրականացնել ոչ միայն այն միջոցներով, որոնք առկա են դիվերսիոն-հետախուզական խմբի մոտ, այլև դիվերսիաների հմուտ անցկացմամբ, օրինակ. քիմիական ձեռնարկությունների, թունավոր քիմիական նյութեր օգտագործող հիմնարկ-ձեռնարկությունների պայթեցմամբ և այլն: Ինչպես նաև այդ նպատակի համար կարելի է օգտագործել ատոմակայանները՝ որոնց շարքից հանելու դեպքում միաժամանակ որոշակի շրջաններ զրկվում են էլեկտրաէներգիայից և տեղի է ունենում տեղանքի ռադիացիոն վարակում:

Զգալի արդյունքների կարելի է հասնել նաև պայթեցնելով հիդրոտեխնիկական կառույցներ (ամբարտակներ, հիդրոէլեկտրակայաններ, ջրանցքներ և այլն): Դրա արդյունքում հակառակորդի տարածքների մի մասը կարող է հայտնվել ջրհեղեղի տեղամասում, զրկվել էլեկտրաէներգիայից, կարող են ավերվել հաղորդակցության ուղիները, ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհները և այլն:

1.3 Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարի հիմունքները

Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարը՝ նրանց հայտնաբերումը, չեզոքացումը, վնասազերծումը կամ ոչնչացումն է: Այն իրագործվում է հակառակորդի դիվերսիոն-հետախուզական գործունեության բոլոր ժամանակահատ-վածներում:

ԴՀԽ-ների արտանետման նախապատրաստման փուլում նրանց ոչնչացումը իրականացվում է ռազմական հրամանատարության և անվտանգության մարմինների կողմից հատուկ միջոցների կիրառմամբ:

ԴՀԽ-ների արտանետման պատրաստման մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալուց հետո հակառակորդի ուսումնական կենտրոններին (դպրոցներին), դիվերսանտների անմիջական պատրաստության վայրերին զինվորական հրամանատարության ձեռքի տակ եղած հեռահար զենքով, կարող են հասցվել հարվածներ: Բացի այդ ԴՀԽ-ներին զգալի վնաս կարելի է հասցնել հարձակումներ, (գրոհներ), դարանակալումներ իրականացնելու միջոցով, ինչպես նաև տարբեր նշանակության դեսանտային ստորաբաժանումների կողմից:

Հակառակորդի ԴՀԽ-ների օդային ճանապարհով արտանետման դեպքում հակառակորդի ոչնչացման համար բարենպաստ ժամանակ է հանդիսանում նրանց դեսանտավորման ընթացքը, քանի որ այդ ժամանակահատվածում նրանք ընդունակ չեն միանգամից թաքնվել կամ կազմակերպված դիմադրություն ցուցաբերել:

ԴՀԽ-ների ձերբակալումը (ոչնչացումը) իրականացվում է հատուկ օպերացիաների անցկացման ճանապարհով զորամիավորման, (զորամասի) հրամանատարի ղեկավարությամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարը, որպես հակազդեցության միջոցառումների համակարգ, հատուկ ուշադրություն կդարձվի առաջին հերթին ստորաբաժանումների զորային գործողությունների տեսակներին:

Ստորաբաժանումների զորային գործողությունները ուժերի և միջոցների ընտրված տարբերակներ են հակառակորդի ԴՀԽ-ների ձերբակալման (ոչնչացման) խնդիրների լուծման համար:

Հակառակորդի ԴՀԽ-ների ձերբակալման (ոչնչացման) համար զորային գործողությունների հիմնական ձևերն են՝ *շրջափակումը, որոնումը, հակառակորդի հնարավոր գործողությունների ուղղությունների փակումը, շրջապատումը, դարանակալումը, հետապնդումը, հարձակումը (գրոհումը), մարտարշավը և հետախուզա-որոնողական գործողությունները*:

1.4 Հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարում ուժերի և միջոցների կիրառման բնութագիրը և պայմանները

Մեր զորքերի թիկունքում հայտնված (մնացած) ստորաբաժանումների և հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարի մարտական և հատուկ խնդիրների լուծման նպատակով, հակառակորդի գործողությունների սահմանափակման և նրա մարտից խուսափելը բացառելու համար կարող է կիրառվել նրա զբաղեցրած տարածքի շրջափակումը, հետագա սանրումը, հակառակորդի հայտնաբերումը, շրջապատումը, զենքի հանձնման հարկադրանքը, իսկ դիմադրության դեպքում՝ ոչնչացումը:

Շրջափակումը իրենից ներկայացնում է ԴՀԽ-ների գտնվելու շրջանը մեկուսացնելու, այնտեղից նրանց դուրս գալը կանխելու, զննման շրջանը սահմանափակելու, որոնման խմբին (խմբերին) աջակցելու, ԴՀԽ-ների ոչնչացումը (պաշտպանական բնագծի ճեղքման փորձի դեպքում) իրականացնելու նպատակներով **(հավելված 4):** Տեղանքը համարվում է շրջափակված, ստորաբաժանումների միջև տեսական և կրակային կապի առկայության դեպքում:

Շրջափակված շրջանը բաժանվում է ստորաբաժանումների միջև: Շրջափակման բնագիծը ընտրվում է տեղանքի այնպիսի հատվածներում, որոնք ապահովում են՝ նրան մոտենալու համար հարմար ճանապարհներ, ստորաբաժանումների կողմից զբաղեցման և տեղակայման ծածուկություն, տեղանքի լավ տեսադաշտ և կրակադաշտ: Բաց (փակ) տեղանքում ստորաբաժանումներին նշանակվում են շրջափակման տեղամասեր՝

գումարտակին **մինչև 12կմ (մինչև 5կմ),** վաշտին **մինչև 5կմ (մինչև 2կմ)** : Մոտոհրաձգային դասակին կարող է նշանակվել դիրք **մինչև 1500մ (750մ)** ճակատով, ջոկին՝ մարտական դիրք **մինչև 500 մ (250մ)** ճակատով:

Ստորաբաժանումները շրջափակման բնագծում՝ կախված իրավիճակից, հակառակորդի ենթադրյալ կազմից և գործողությունների հավանական տարբերակներից, պատրաստվում են պաշտպանական գործողությունների վարման: Առավել խիտ փակվում են բնակավայրեր տանող ճանապարհները և անտառածածկ տարածքները: Ստորաբաժանումների միջանկյալ տարածքները փակվում են կրակով և ինժեներական արգելափակոցներով, անտեսանելի տարածքներում կազմակերպվում են դիտակետեր, դետքեր, գաղտնաջոկատներ, կազմակերպվում են դարաններ և տեղադրվում են ազդանշանային ականներ:

Ստորաբաժանումների դիրքերը մանրակրկիտ քողարկվում են, նրանց վրա կարող են փորվել մենահատ կամ զույգ խրամատներ: Առաջակալի կազմում կարող է ընդգրկվել դասակից մինչև ջոկ:

Դասակի մարտակարգը հենակետում, կախված դրված խնդրից և տեղանքի պայմաններից կազմվում է մեկ գծով՝ ներառելով մոտոհրաձգային ջոկերը, ղեկավարման և կրակային օգնության, մարտական մեքենաների խմբերը:

Դասակի դիրքը շրջափակման բնագծով կազմվում է մոտոհրաձգային ջոկերի մարտական դիրքերից, որտեղ հիմնական և պահեստային կրակային դիրքերում կարող են փորվել խրամատներ հրաձիգների, գնդացրորդների, նռնականետորդների համար: Ժամանակի առկայության դեպքում խրամատները միացվում են խրամուղիներով:

Ստորաբաժանումները ծածուկ տեղաշարժվում և զբաղեցնում են շրջափակման բնագիծը, պահպանելով քողարկման կանոնները:

Ամիջապես մինչև բնագիծ տեղաշարժումը կարող է իրականացվել մարտական տեխնիկայով, կամ հետիոտն՝ տեխնիկան կենտրոնացնելով 2-3կմ հեռավորության վրա: Մարտական տեխնիկան գործում է ստորաբաժանումների կազմում, կենտրոնացվում է նշված շրջանում պատրաստ դեպի կրակային բնագծեր տեղաշարժին՝ ստորաբաժանումների մոտ կամ մնում է ելքային (հենակետային) շրջանում:

Ստորաբաժանումները զբաղեցնում են շահավետ բնագծեր, փակելով հակառակորդի գտնվելու շրջանից դուրս գալու, սողոսկելու հավանական ճանապարհները և այլ ուղիները, հասնելով շրջանի ամբողջական մեկուսացմանը:

Շրջափակման խմբի մեջ, որպես կանոն մտնում է օպերացիային մասնակցող ուժերի 1/3 -ից մինչև 1/2-րդ մասը, երբեմն նույնիսկ ավելին:

Շրջափակված շրջանի ղեկավարման հարմարության համար շրջանը բաժանվում է ըստ գումարտակային և վաշտային պատասխանատվության տեղամասերի, որոնք իրենց

հերթին բաժանվում են դասակային հատվածների: Տեղանքի սանրում իրականացնող ստորաբաժանումների շղթայից հակառակորդի սողոսկումը բացառելու նպատակով, շրջանի ներսում լրացուցիչ շրջափակվում են որոշ առանձին օբյեկտներ: Շրջափակող խմբի մարտակարգը ընդգրկում է շրջափակման բնագծում տեղակայված ստորաբաժանումների մարտակարգերը և պահուստները: Ստորաբաժանումները բացազատվում են պաշտպանական գործողությունները լայն ճակատով վարելու նպատակով, իսկ տեղանքի առանձին դժվարանցանելի հատվածներում՝ շրջանաձև պաշտպանության նպատակով, որպեսզի հնարավոր լինի ապահովել տեղանքի տեսանելիությունը և գնդակոծումը: Զրահախմբերը տեղակայվում են ստորաբաժանումների ետևում **150մ-ից ոչ պակաս** միջակայքով և ապահովում նրանց կրակով: Հրետանու և ականանետերի կրակային դիրքերը ընտրվում են հակառակորդի ենթադրյալ նահանջի ուղղությամբ **մինչև 500մ** հեռավորությամբ: Զինվորների զույգերի միջև հեռավորությունը շրջափակման բնագծով տեղակայման ընթացքում կազմում է **25-30մ:** Շրջափակման բնագծում ստորաբաժանումների ժամանակին ուժեղացման համար գումարտակում ստեղծվում է շարժական պահուստ, ընդունակ օժանդակելու իրենց ստորաբաժանումներին ամբողջ ճակատով և ճիշտ ժամանակին:

Դժվարանցանելի տեղանքի պայմաններում, ինչպես նաև խոշոր ԴՀԽ-ների դեմ պայքարում ուժերի և միջոցների չբավականացնելու դեպքում, որոնման շրջանը չի շրջափակվում, այլ իրականացվում է հակառակորդի հավանական շարժի ուղղության փակում: Գործողությունների այս ձևը իրականցվում է տեղանքի շահավետ բնագծով հատուկ զորային վերակարգերի միջոցով (առաջակալների, գաղտնաջոկատների, դետքերի, դիտակետերի), ապահովելով դիվերսանտների հնարավոր սողոսկումը որոնման (շրջափակման) շրջանից, նրանց ոչնչացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Այդպիսի ուղղություններ լեռնային և լեռնա-անտառային տեղանքներում կարող են հանդիսանալ կիրճերը, մարգագետինները, գետահուները, արահետները, ոլորանները, իսկ անտառային տեղանքներում՝ ուղիները և կածանները:

Շրջափակման ավարտից հետո, որպես կանոն իրականացվում է հակառակորդի ԴՀԽ-ների որոնումը: Հակառակորդի ԴՀԽ-ների որոնումը նախատեսում է *որոնողական և հետախուզա-որոնողական* գործողությունների անցկացում:

Որոնողական (հետախուզա-որոնողական) գործողությունները անցկացվում են տեղանքի զննման (հետազոտման) համար, հակառակորդին հայտնաբերելու և ձերբակալեու (ոչնչացնելու) նպատակով, ինչպես նաև հակառակորդի մարտական գործողությունների համար նախատեսված օբյեկտների հայտնաբերման նպատակով, որոնք կարող են կատարվել ինչպես շրջափակված, այնպես էլ չշրջափակված շրջանում**:**

Մոտոհրազձգային դասակը *որոնողական գործողությունները* անցկացնում է վաշտի (գումարտակի) կազմում, գործելով առաջին շարակարգում կամ նրանց համազորային պահուստուժում:

Հետախուզա-որոնողական գործողությունները (ՀՈԳ) դասակը վարում է, որպես կանոն ինքնուրույն, որոնողական խմբի (ՈԽ) կարգավիճակով:

Մոտոհրաձգային դասակին՝ որոնողական (հետախուզա-որոնողական) գործողությունների ընթացքում կարող են տրվել ինժեներա-սակրավորային ստորաբաժանում և մեկ-երկու հրանետորդ: Տանկային ստորաբաժանումը ամբողջ կազմով սովորաբար օգտագործվում է համազորային պահուստում:

Որոնումը կարող է իրականացվել ինչպես ԴՀԽ-ների գտնվելու հավանական շրջանի շրջափակմամբ, այնպես էլ առանց դրա: Կախված ստացված խնդրից, տեղանքի պայմաններից, գործողությունների շրջանից, ուժերի ու միջոցների և ժամանակի առկայությունից, ստորաբաժանումները կարող են իրականացնել համատարած կամ ընտրանքային որոնում:

Համատարած որոնումը կարող է անցկացվել միաժամանակ ամբողջ շրջանում**:** կամ հատվածների հերթականությամբ: Առաջին դեպքում, որոնումը կարող է տարվել մի ուղղությամբ *(միակողմանի որոնում)*, երկու ուղղություններից (*երկկողմ, հանդիպակաց*) կամ *մի քանի ուղղություններից* դեպի շրջանի կենտրոն: Երկրորդ դեպքում սկզբում զննվում է հակառակորդի հավանական գտնվելու տեղանքը, հետո առանձին հատվածները:

Միակողմանի որոնումը կիրառվում է բավարար քանակության ուժերի, միջոցների, և ժամանակի առկայության դեպքում, որոնք հնարավորություն են տալիս մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքը հակառակորդի գտնվելու ամբողջ շրջանում:

Երկկողմ (հանդիպակաց) որոնումը կիրառվում է ԴՀԽ-ների զբաղեցրած շրջանի մեծ տարածության, սահմանափակ ժամանակի, անհրաժեշտ ուժերի և միջոցների առկայության դեպքում, նաև այն դեպքում երբ միակողմանի որոնումը անհնարին է կամ դժվար է իրագործել բնական խոչընդոտների պատճառով:

Մի քանի ուղղություններից դեպի կենտրոն որոնումը կայացվում է այն դեպքում, երբ հայտնի է, որ հակառակորդը գտնվում է զննվող շրջանի կենտրոնում: Շրջանի շրջափակման ուրվագիծը պետք է նպաստի որոնմանը, իսկ ուժերն ու միջոցները կարողանան ապահովել նրա անհրաժեշտ խտությունը:

Համատարած որոնումը՝ *հատվածների հաջորդականությամբ* կարող է լինել այն դեպքում, երբ ուժերը և միջոցները չեն բավարարում ամբողջ շրջանում միաժամանակյա որոնման համար, կամ տեղանքը, որը զննման ենթակա է, պատված է դժվարանցանելի խոչընդոտներով: Սկզբում զննվում է հակառակորդի գտնվելու հավանական տեղանքը, այնուհետև մնացած հատվածները: Որոնման ընթացքում, զննված տարածքը

առանձնացվում է շրջափակման միջոցով կամ վերակարգեր (դետքեր, գաղտնաջոկատներ, դիտակետեր) տեղադրելով:

Որոնումը ընտրված ուղղություններով կիրառվում է այն տեղանքում, որտեղ դժվար է (հնարավար չէ) իրականացնել համատարած զննում (բարձր լեռնային, լեռնաանտառային, անտառային տեղանք), ինչպես նաև համատարած որոնումից հետո ուժերի ու միջոցների անբավարարության դեպքում, երբ ԴՀԽ-ների որոշակի տեղամասում գտնվելու մասին տվյալները հաստատվում են:

Ընտրական որոնումը ըստ ուղղությունների կարող է լինել նույնը ինչ համատարածը՝ այսինքն միակողմանի և հանդիպակաց, կատարվել մի քանի ուղղություններից դեպի շրջանի կենտրոն: Լեռներում հնարավոր են գործողություններ շրջանի կենտրոնից դեպի տարբեր ուղղություններ: Վերջինի դեպքում ստորաբաժանումները ցրվում են մարգագետիններով, որևէ բնական դժվարանցանելի պատնեշի ԴՀԽ-ներին սեղմելու կամ հակառակորդի նահանջը կանխելու նպատակով առաջակալներ տեղադրելու միջոցով:

Ստորաբաժանումների **մարտակարգը** հակառակորդի ԴՀԽ-ների որոնման դեպքում կարող է ընդգրկել՝ *դետք (զույգ դետքեր), որոնում իրականացնող, շրջափակող, կրակային, զրոհային, խմբեր, պահուստ, մարտական տեխնիկայի առկայության դեպքում, նաև զրահախումբ*:

Շրջափակման խումբը ընդգրկում է առաջակալներ կամ դարաններ:

Մոտոհրաձգային դասակի մարտակարգը որոնողական (հետախուզա-որոնողական) գործողությունների անցկացման դեպքում ընդգրկում է մոտոհրաձգային ջոկերը, հետիոտն կարգով գործող, ղեկավարման և կրակային օժանդակող խմբերը: ՀՄՄ-ները (ՁՓ) կարող են կենտրոնացվել ավագ պետի նշած շրջանում կամ միացվել մարտական մեքենաների խմբին:

Որոնողական գործողությունների դեպքում (սանրման դեպքում) մոտոհրաձգային ջոկերը սովորաբար գործում են մի գծով և տեսողական կապի հեռավորության վրա ուղարկվում են հետիոտն դետքեր:

ՀՈԳ-ների վարման ընթացքում, կախված ստացված առաջադրանքից և իրավիճակի պայմաններից մոտոհրաձգային ջոկերի մարտակարգը կարող է լինել մեկ կամ երկու գծով, անկյունով առաջ (հետ):

Հակառակորդի հետ հավանական հանդիպման պայմաններում մարտական խմբերը, որպես կանոն, գործում են երկու գծով: Առաջին գծում գործում է զինավարող խումբը, երկրորդում՝ կրակային:

ՀՈԳ-ներով օբյեկտները զննելիս, ստորաբաժանումների մարտակարգը կարող է ընդգրկել զննող, պաշտպանող և պահուստային խմբեր: Ջոկերի (խմբերի) գործողությունները պահելու համար կարող է ստեղծվել կրակային խումբ: Շրջափակող խումբը պաշարում է

օբյեկտը և պատրաստ է զննող խմբին օժանդակել կրակով: Կրակային խումբը զբաղեցնում է շահավետ բնագիծ: Զննող խումբը փոխադարձ ապահովում իրացնելով, նաև անցկացնում է օբյեկտի զննումը:

Որոնում իրականացնելու համար նշանակվում են՝ *ելքային, հավասարեցնող և վերջնական բնագծեր (հանդիպման բնագիծ), մարտական տեխնիկայի կենտրոնացման շրջան, գործողությունների (սանրման) ուղղություն (ազիմուտ, գոտի):*

Նշանակված ժամին կամ ավագ ղեկավարի ազդանշանով (հրամանով) ստորաբաժանումները դուրս են գալիս ելքային բնագիծ և սկսում են որոնողական գործողությունները նշված ուղղությամբ:

Ջոկերի մարտակարգը երկու գծով գործելու դեպքում, մարտական խմբերը որոնումը իրականացնում են հաջորդաբար (հերթականությամբ) տեղափոխությամբ: Մեկ գծով գործելու դեպքում առաջինը սկսում են շարժվել հետիոտն դետքերը:

Առաջին գծի մարտական խմբերը (հետիոտն դետքերը) դասակի հրամանատարի ազդանշանով (հրամանով) տեղափոխվում են միջանկյալ բնագիծ: Մինչ նրանցից **“Ճանապարհն ազատ է”** ազդանշանի ստացումը դասակը (որոնող խումբը) գտնվում է ելքային (միջանկյալ) բնագծում պատրաստ վիճակում՝ օժանդակել առաջին գծի խմբերին (հետիոտն դետքերին) կրակով: Ղեկավարման և կրակային օժանդակման խմբերը տեղաշարժվում են դասակի հրամանատարի հրամանով:

Դասակի միջանկյալ բնագիծ դուրս գալուն պես հրամանատարը նշում է (ճշտում է) հաջորդ միջանկյալ բնագիծը և շարժումը վերսկսվում է:

Հավասարեցման բնագծերում ճշտվում են ստորաբաժանումների դիրքերը և խնդիրները, համագործակցությունը, անհրաժեշտության դեպքում հետագա ընթացքի ուղղությունը, հավասարեցվում է մարտակարգը:

Պահուստ առանձնացված դասակը զբաղեցնում է շրջանը կամ նախամարտական կարգով շարժվում է որոնում իրականացնող ստորաբաժանումների ետևից՝ պատրաստ փակելու հակառակորդի փախուստի ճանապարհները, նրան հետապնդելու կամ մարտի մեջ մտնելու համար:

Հակառակորդի փոքրաթիվ ուժերի հայտնաբերման դեպքում դասակը (ջոկը) ինքնուրույն ոչնչացնում է նրանց: Մեծաքանակ կամ առավել ուժեղ հակառակորդի հայտնաբերման դեպքում, ստորաբաժանումը համագործակցելով հարևանների հետ հնարավորինս շրջափակում և մարտով կաշկանդում է նրան, հետագայում պահուստային ստորաբաժանումների օգնությամբ՝ ոչնչացնում:

Հակառակորդի մարտից խուսափելու դեպքում կազմակերպվում է նրա հետապնդման գործընթացը: Որոնող խմբերը, իրացնելով կրակային ներգործություն, հակառակորդին կաշկանդում են մարտով, թևերում և թիկունքում զորաշարժելով ստիպում են նրան

նահանջել այն ուղղությամբ, որտեղ պատրաստված են շրջափակող ստորաբաժանումների դիրքերը:

Հակառակորդի ճեղքման դեպքում, ստորաբաժանումները շրջափակման բնագծում, որպես կանոն մնում են դիրքերում մինչև որոնումների ավարտը, հակառակորդի նահանջի ճանապարհները և հետապնդումը կատարում են որոնող և պահուստային ստորաբաժանումները:

Որոնման ընթացքում բաց տեղանքում զինվորների միջանկյալ հեռավորությունը կազմում է **10-15մ,** փակ տեղանքում՝ **5-7մ:** Ջոկը կարող է մաքրել տեղանքը **մինչև 100 մ** ճակատով, դասակը՝ **մինչև 300 մ,** վաշտը՝ **մինչև 800-1000մ,** գումարտակը՝ **մինչև 2 կմ:**

Ստորաբաժանումների շարժման տեմպը պետք է ապահովի տեղանքի, կառույցների և այլ օբյեկտների մանրակրկիտ զննումը, ստորաբաժանումների կրակով պաշտպանությունը և կարող է կազմել բաց տեղանքում՝ **մինչև 3կմ/ժ**, միջին անցանելի տեղանքում՝ **մինչև 2կմ/ժ,** լեռնային շրջաններում և անտառներում՝ **մինչև 1կմ/ժ:**

Հավասարեցնող բնագծերը նշանակվում են լավ տեսանելի կողմնորոշիչներով **1,5-2ժամ** որոնումներից հետո: Հավասարեցնող բնագծերում ճշտվում են ստորաբաժանումների (խմբերի) փոխադարձ դիրքերը և խնդիրները, համագործակցությունը, անհրաժեշտության դեպքում հետագա ընթացքի ուղղությունը, հավասարեցվում է մարտակարգը:

Հայտնաբերված զենքերը և զինամթերքը առգրավվում են, կասկածելի և ստորաբաժանումների դիրքերը դուրս եկած անձինք ձերբակալվում և փոխանցվում են իրավապահ մարմիններին (կենտրոնացվում են հատկացված վայրում), իսկ դիմադրողները ոչնչացվում են:

ՀՈԽ-ները ուղարկվում են ԴՀԽ-ների կամ նրանց գործունեության նախանշանների հայտնաբերման շրջան՝ հետախուզում, որոնում և հետապնդում իրականացնելու համար: ՀՈԽ-ների քանակը, կազմը և հանդերձանքը որոշվում է այն հաշվարկով, որպեսզի առավելագույն կերպով ապահովվի գործողությունների շարժունեությունը և ինքնուրույնությունը: Յուրաքանչյուր խմբին նշվում է հետախուզման (որոնման) ուղղությունը կամ երթուղին:

ՀՈԳ-ների անցկացման համար վաշտին կարող են տրվել մեկ-երկու տանկային դասակներ, ինքնագնաց հրետանային դասակ, (անհրաժեշտության դեպքում՝ մարտկոց), կամ 120-մմ (82-մմ) ականանետային դասակ, հետախուզական դասակ, ինժեներա-սակրավորական ջոկ, հրանետային ջոկ, կապի ջոկ: Որոնման գործողություններին մասնակցող մոտոհրաձգային ստորաբաժանումների անձնակազմը, հնարավորության դեպքում կարող է լրացուցիչ ապահովվել հատուկ միջոցներով (արցունքաբեր և շոկային նռնակներ,

ցամաքային հետախուզման ռադիոլոկացիոն կայաններ, հատուկ նշանակության ուժերի կողմից օգտագործվող սպառազինություն):

Շրջափակմանը զուգահեռ կատարվում է հակառակորդի **շրջապատումը:** Շրջապատումը նախատեսում է հակառակորդի դիվերսիոն հետախուզական և այլ հատուկ կազմավորումների ոչնչացման համար, որը իրականացնում են նրանց հետ շփման մեջ մտած կամ հատուկ առանձնացված ստորաբաժանումները: Շրջապատումը որպես հակառակորդի ԴՀԽ-ների ոչնչացման եղանակ, սովորաբար կիրառվում է այն դեպքում, երբ հայտնի է հակառակորդի ճշգրիտ գտնվելու վայրը: Շրջապատումը կայանում է հակառակորդին ոչնչացնելու նպատակով նրան մեկուսացնելու մեջ: Շրջապատումը կարող է լինել ինչպես ինքնուրույն գործողությունների ձևով՝ հակառակորդի գտնվելու վայրի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացման դեպքում, այնպես էլ կարող է ի հայտ գալ ԴՀԽ-ների չեզոքացման այլ ձևերի կիրառման ընթացքում: Այն իրականացվում է ծածուկ, քողարկման կանոնների պահպանմամբ, ապահովելով գործողությունների հանկարծակիությունը:

Ստորաբաժանումների **մարտակարգը** շրջապատման դեպքում կարող է կազմվել՝ *շրջապատող խմբից (առաջակալ և այլ վերակարգեր), կրակային խմբից, գրոհող խմբից և պահուստից:*

Շրջապատող խումբը որպես կանոն գործում է շղթայով հետիոտն կամ գծային՝ ՀՄՄ-ներով (ՁՓ): Գիշերային գործողությունների դեպքում անձնակազմը պետք է ունենա լուսավորող սարքավորումներ **(լապտերներ)** և ճանաչման նշաններ, հանդերձանքի վրա ամրացված, որպեսզի բացառվի խոցումը յուրային ստորաբաժանումների կրակից:

Շրջապատող խմբին ամրակցվում են տեղամասեր՝ ջոկին **50-60 մ,** դասակին **300-400մ**, վաշտին **1000-1500մ**: Շրջապատող ստորաբաժան-ման դիրքերը սարքավորվում են ինժեներական առումով:

Կրակային խումբը տեղակայվում է շրջապատող խմբից **մինչև 1000 մ** հեռավորության վրա՝ պատրաստ ճնշելու և ոչնչացնելու ԴՀԽ-ների կրակային միջոցները:

Պահուստը տեղակայվում է հակառակորդի ճեղքման առավել հավանական ուղղությունների վրա՝ պատրաստ լուծելու հանկարծակի ծագող խնդիրները:

Շրջապատման ընթացքում հնարավոր է հակառակորդի ջախջախման մի քանի տարբերակ: Դրանցից են՝ շրջապատման մասնակից բոլոր ստորաբաժանումների կենտրոնին համընթաց մոտենալը, օղակի աստիճանաբար սեղմումով հակառակորդին մասնատելը և նրան մաս-մաս ոչնչացնելը, շրջապատման օղակի սեղմման ընթացքը ուղղություններում, զուգորդելով մյուս ուղղությունների ամուր պաշտպանությամբ:

Շրջապատված հակառակորդի ոչնչացման համար ստորաբաժանումների կողմից կիրառվող մարտավարական վարժաձևերն են՝ հարձակումը (գրոհը), օդագրոհային

հարձակումը, հանդիպակաց ուղղություններով գրոհը, տարբեր տեսակի հարվածների և զորաշարժերի համատեղումը:

Հարձակվող խումբը (գրոհող խումբը) գործում է ՀՄՄ-ներով (ՁՓ-ներով) կամ հետիոտն: Նրա կազմը որոշվում է կախված հակառակորդի ուժերից և զինվածությունից: Հակառակորդի ոչնչացման համար ստեղծվում »ն 2-3 գրոհային խմբեր՝ մոտոհրաձգային դասակի կազմով, 2-3 սակրավոր (պայթուցիկների և ականների պահուստով), հրանետների ջոկ, 1-2 ականանետային հաշվարկ, հրետանու ճշտորդներ, սանիտարներ:

Գրոհող խմբի գործողությունները սկսվում են անմիջապես շրջապատումից հետո:

ԴՀԽ-ների ոչնչացման լավագույն ձևերից մեկն է **դարանը:** Դարանի իմաստը կայանում է՝ հակառակորդի շարժման հավանական ուղղության վրա, ստորաբաժանումը մարտավարապես շահավետ բնագծում (դեսանտի իջեցման շրջանում) նախապես քողարկված տեղակայելու, անակնկալ կրակ բացելու, վճռական հարձակվելու և հակառակորդի համար անսպասելի այլ գործողությունների իրականացման մեջ**:**

Կախված տեղանքի պայմաններից, հակառակորդի ստորաբաժանումների ուժերից և միջոցներից տարվա եղանակից և օրերից, դարանները կարող են լինել՝ ցերեկային, գիշերային, անշարժ, շարժական, միակողմանի և երկկողմանի, եզակի, կրկնակի և եռակի**:**

Դարանի կազմի մեջ, որպես կանոն, մտնում են՝ դասակ (հետախուզական, մոտոհրաձգային) կամ հատուկ նշանակության հետախուզական խումբ, ուժեղացված 82մմ ավտոմատ ականանետի "Վասիլյոկ" հաշվարկ, դիպուկահարների խումբ, հրետանու ճշտորդ և օդային նշանառու: Դարանի անձնակազմի սպառազինությունը սովորաբար հաստիքային է: Բացի այդ անձնակազմը կարող է համալրվել գիշերային տեսողության և անձայն կրակոցի սարքավորումներով, ավելացված մարտալրակազմով, 3-4 "Մուխա" տիպի նռնականետերով (հաստիքային ՁՀՆ-7-ի փոխարեն), ռադիոկայաններով՝ զորամասերի հրամանատարների, ուղղաթիռների և հրետանու հետ կապ պահպանելու համար: Սակրավորները իրենց հետ վերցնում են ուղղությամբ գործող և բեկորային հակահետևակային ականների հնարավորինս մեծ պաշար:

Դարանի ստորաբաժանման մարտակարգը ընդգրկում է՝:

- հարձակման խումբ,

- դիտորդների խումբ,

- գերիների, փաստաթղթերի և զենքերի գրավման խումբ,

- ականապատման (ականազերծման) խումբ,

- ապահովման (կրակային) խումբ, հակառակորդի ուժերի հարձակման վտանգի դեպքում՝ թևերը և թիկունքը պահպանելու համար,

- գրահախումբ (եթե ելքը դարանի շրջան կատարվում է ՀՄՄ-ներով կամ ՁՓ-ներով): Այն ծածուկ տեղակայվում է շրջանում դեպի դարան տանող արագ ելքի հնարավորությամբ,

ստորաբաժանմանը օգնելու անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև առաջադրանքը կատարելուց հետո նրա հեռացման համար: Ուժերի և միջոցների առկայության դեպքում դարանի կազմի մեջ կարող է ընդգրկվել նաև *շեղող խումբ:*

Դարան նշանակված ստորաբաժանումները ծածուկ տեղափոխվում են դարանի շրջան և գտնվում են հակառակորդի տեսադաշտից դուրս քողարկված շրջանում: Տեղաշարժը ցանկալի է իրացնել գիշերը՝ զույգերով դետքերի պաշտպանությամբ, որոնք ուղարկվում են առաջ, դեպի թևեր և թիկունք: Դուրս գալով դարանի շրջան, դետքը ուսումնասիրում է տեղանքը՝ ուշադրություն դարձնելով բարձունքներին, բնական թաքստոցներին, որտեղ կարող է գտնվել հակառակորդը: Ստորաբաժանման գլխավոր ուժերի դարան դուրս գալուն պես այդ շրջանում կազմակերպվում է դիտարկում, անմիջական պահպանություն և շրջանաձև պաշտպանություն:

Ուժերի մի մասը կենտրոնացվում է դարանի շրջանի ելքի (մուքի) վրա, հիմնական ուժերը ուժեղացման միջոցներով ՝ շրջանի կենտրոնում: Անձնակազմի և կրակային միջոցների դասավորությունը պետք է ապահովի հակառակորդի ոչնչացումը ստեղծված **“կրակե պարկում”** և նրանից դուրս պրծնելու փորձի դեպքում:

Հատկապես մանրակրկիտ կազմակերպվում է կրակային համակարգը, որին համակցվում են ականապայթուցիկ արգելափակոցները: Ականները դարանի շրջանում տեղակայվում են ջոկերի դիրքերի դիմաց, ԴՀԽ-ների հավանական շարժի երկայնքով, գետանցների և այլ տեղերում, որոնք սահմանափակում են ԴՀԽ-ների շարժը: Դարանում լայնորեն կիրառվում են կառավարվող ականները, որոնց պայթեցումը կարող է լինել ազդանշան կրակի բացման համար: Դարանի դիրքերում անձնակազմը հանգամանորեն քողարկվում է և գտնվում միշտ պատրաստ վիճակում կրակ բացելու համար: Հակառակորդի մոտենալու մասին դիտորդները զեկուցում են որոշված ազդանշաններով:

Հակառակորդի գլխավոր ուժերի մոտենալուն պես, դարանը թույլ է տալիս նրանց ընկղմվել կրակային խոցման հիմնական գոտի և հրամանատարի հրամանով (ազդանշանով) հանկարծակի կրակ է բացում: Եթե հակառակորդի ուժերը գերազանցում են դարանին և նա փորձում է շրջապատել և ոչնչացնել նրան, դարանի անձնակազմը անցնում է շրջանաձև պաշտպանության շարունակելով ամուր պահել զբաղեցրած դիրքերը, կանչում է զրահախմբին կամ ավագ պետի պահուստին:

Հակառակորդի կողմից դարանի հայտնաբերման դեպքում դարանի հրամանատարը կազմակերպում է նրա կրակային խոցումը բոլոր միջոցներով և ապահովման խմբի պաշտպանության ներքո դուրս է բերում ստորաբաժանումները դարանի շրջանից: Նոր շրջանի տեղաշարժը իրականացվում է նոր երթուղով, խստորեն կատարելով պահպանության և քողարկման կանոնները:

Հարձակումը (գրոհը) որպես հատուկ գործողությունների ձև կայանում է՝ ԴՀԽ-ների օբյեկտները ոչնչացնելու կամ կալանելու նպատակով դրանց վրա ստորաբաժանումների անսպասելի և վճռական գրոհի մեջ: Այն կարող է իրականացվել ԴՀԽ-ների կողմից կազմավորված և իրենց գործունեությունն ապահովող բազաների, պահեստների, շտաբների և այլ օբյեկտների վրա: Կապված տեղանքից, օբյեկտի չափից, դրա պահպանության ու պաշտպանության ձևից, հարձակումը կարող »ն իրականացն»լ ստորաբաժանումները՝ դասակից մինչև գումարտակ (երբեմն ավելի մեծ ուժերով)**:**

Ստորաբաժանումների **մարտակարգը** հարձակման անցկացման դեպքում կարող է բաղկացած լինել՝ *հարձակվող (գրոհող) խմբից, ոչնչացման խմբից, ապահովման խմբից, իսկ ուժերի և միջոցների առկայության դեպքում կրակային խմբից և պահուստից:*

Հարձակումները, որպես կանոն կիրառվում են հակառակորդի ստացիոնար և սակավաշարժ օբյեկտների վրա: Նրանց իրագործման համար համազորային կազմավորումների հետ զուգահեռ ընդգրկվում են նաև հատուկ նշանակության և հետախուզական ստորաբաժանումները, ավելի քիչ՝ դեսանտագրոհային: Հակառակորդի հենակայանների ոչնչացման համար ավելի արդյունավետ են գիշերային և այլ սահմանափակ տեսանելիության պայմաններում կատարվող գրոհները:

Մարտակարգը կարող է ընդգրկել հետևյալ խմբերը. *գրավման՝ 1-2 (մինչև 20-40 մարդ), ապահովման՝ 3-4 (մինչև 10-20մարդ), ականապատման՝ 1-2 (մինչև 4-6 մարդ), գրահախումբ և անհրաժեշտության դեպքում հրետանի:*

Ստորաբաժանումների հարձակման գործողությունների արդյունավետության բարձրացմանը կարելի է հասնել հարձակման ենթակա օբյեկտի մանրամասն ուսումնասիրության միջոցով, օբյեկտը օդալուսանկարահանելով, մարդկանց, ովքեր լավ գիտեն հարձակման ենթակա օբյեկտը և նրա մուտքերը, որպես ուղեկցողների օգտագործելով:

Հարձակումը պետք է ուղեկցվի հրետանու և օդուժի գնդակոծումներով, գրահախմբի օժանդակությամբ: Հարձակմանը նախապատրաստվելիս անհրաժեշտ է պատրաստել տեղանքի մանրակերտ, և նախապատրաստել նմանատիպ տեղանք անձնակազմի մարզումների համար:

Հետապնդումը ստորաբաժանումների կողմից որոնողական կամ հետախուզա-որոնողական միջոցառումների իրականացման ընթացքում աննահանջ շարժ է նահանջող հակառակորդի ուղղությամբ՝ նրան փախչելու, դիտարկվող և կրակի վարման շրջանից դուրս գալու հնարավորություն չտալու, հետագայում շրջապատելու, կալանելու կամ ոչնչացնելու նպատակով **(հավելված 14):**

Հետապնդումը սկսվում է հակառակորդի փախուստի պահից և վարվում է նույն մարտակարգերով, մնացած ստորաբաժանումները շարժվում են նախամարտական կարգով:

Կախված ԴՀԽ-ների կազմից, տեղանքի բնույթից, ստորաբաժանումների դիրքերից և այլ պայմաններից, հետապնդումը կարող է իրացվել ճակատից, զուգահեռ ուղղություններով և նրանց համակցմամբ:

Ճակատային հետապնդումները իրականացվում »ն հակառակորդին ճակատից կաշկանդելու նպատակով, մշտապես նրան պահելով լարվածության մեջ, զրկելով տարաշարժի ազատությունից, ստիպելով ոչ շահավետ պայմաններում մտնել մարտի մեջ:

Զուգահեռ հետապնդումը կատարվում է հակառակորդի նահանջին զուգահեռ ճանապարհների վրա զորքերի ելքով, ճանապարհների (գետանցների, տեղանքի շահավետ հատվածների) գրավումով, նպատակասլաց տեղաշարժով՝ թևերին և թիկունքին հարվածելով ավարտելով նրա ջախջախումը:

Ճակատային հետապնդումը սովորաբար համապատասխանեցվում է (ուժերի և միջոցների առկայության դեպքում) նահանջող հակառակորդին զուգահեռ ուղղությամբ անցկացվող հետապնդման հետ:

Հետապնդման ընթացքում հարկավոր է զրկելով հակառակորդին հետապնդող ստորաբաժանումներից փախչելու հնարավորությունից, զբաղեցնել շահավետ բնագծեր և չեզոքացնել նրան մինչև մթնելը:

Հետապնդման անցկացման եղանակներն են

- անմիջական,
- հետքերով,
- ուղղությամբ,
- խուսավարում (թևանցում, շրջանցում):

Մարտարշավը իրենից ներկայացնում է նշված ուղղությամբ ստորաբաժանման կազմակերպված գործողություններ, հակառակորդին հաջորդաբար ոչնչացնելու նպատակով: Այդ գործողությունները կիրառվում են ԴՀԽ-ների լայնածավալ տարածման դեպքերում: Գումարտակին առաջադրանքի կատարման համար նշվում է գործողությունների ուղղություն և մարտարշավի վերջնակետ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ (ՀԵՆԱԿԵՏՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Անձնակազմի ծառայությունն ավելի անվտանգ դարձնելու, զգոնությունը բարձրացնելու և հակառակորդին մոլորեցնելու նպատակով անհրաժեշտ է.

1) շրջանաձև պաշտպանության խրամատները և արգելափակոցները կահավորելիս հաշվի առնել հակառակորդի կողմից օգտագործված նռնակների նետման առավելագույն հեռավորությունը և գործողության շառավիղը,

2) մշտապես փոխել դիտորդների (նաև կացարանի մոտ դիտորդի) ծառայության կրման վայրերը՝ կառուցելով մարտական դիրքերում երկրորդ դիտակետ-կրակակետերը՝ արդյունավետ օգտագործելով տեղանքի ռելիեֆի քողարկիչ հնարավորությունները,

3) գիշերային ժամերին ծածկոցներով լուսաքողարկել կացարանների և ճաշարանների պատուհանները, իսկ դռները ծածկել,

4) պահպանվող բոլոր մարտական դիրքերում պարտադիր ունենալ շներ՝ նրանց սնունդն ապահովելով սննդի մնացորդի հաշվին,

5) մարտական դիրքերում ունենալ ոչ պակաս, քան 2-3 խրտվիլակ, և գիշերը, և ցերեկը՝ փոխելով դրանց տեղադրման կետերը դիտորդների հերթափոխի հետ միաժամանակ,

6) արդյունավետ դիտարկում կատարելու և կրակ վարելու համար ծառածածկ վայրերը մաքրել թփուտներից, իսկ ծառերի բները գետնից 2մ բարձրությամբ ճյուղերից՝ պահպանելով անվտանգության կանոնները,

7) կացարաններում նախատեսել պահեստային ելքեր՝ անձնակազմի անվտանգ դուրս գալու և պաշտպանության անցնելու համար,

8) դիտորդներին սպառազինել լուսածրող հրթիռներով, որոնք օգտագործել միայն հակառակորդի դիվերսիոն-հետախուզական (հետախուզական) խմբերի հայտնաբերման կամ մարտական դիրքի վրա բացահայտ հարձակման դեպքում:

2.1 Մարտական դիրքի հակադիվերսիոն կահավորման օրինակելի ուրվագծի ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի կողմից մարտական դիրքեր ներթափանցելուն, կացարանին աննկատ մոտենալուն և բացահայտվելուց արագ հեռանալը խոչընդոտելու նպատակով անհրաժեշտ է՝

- վտանգավոր ուղղությունների (ճանապարհների, արահետների վրա, ձորակներում) և թևանցման ուղղություններում տեղադրել հակահետևակային ոչ պայթյունային արգելափակոցներ (առանձին վայրերում ըստ առկա պայթյունային արգելափակոցների հետ համատեղ)՝ փշալարային ցանցեր, փշալարային պարույրներ, թույլ նկատելի լարային ցանցեր, փշալարային ցանկապատեր, պահածոյի դատարկ տարաներ,
- խրամատներում, հարևան դիրքերի հետ և չօգտագործվող հաղորդակցության ուղիներում, գիշերային ժամանակահատվածում տեղադրել հակահետևակային ոզնիներ, ցերեկային ժամերին պարապմունքների անցկացումը, ստուգումները, ինժեներական աշխատանքները և բարեկարգումները չխոչընդոտելու համար հանել խրամատներից և տեղադրել հատուկ նախապատրաստված հարթակներում,
- դեպի մարտական հենակետեր (դիրքեր) տանող ճանապարհների վրա տեղադրել տեղափոխվող փշալարային արգելափակոցներ,
- մարտական դիրքերի խրամատների հողաթմբի (բրուստվեր) կամ հարթակների վրա, ողջ երկայնքով, նախկինում առաջարկվող «Արցախ-1» և «Կրիստալ» ձայնային ազդանշանային համակարգի փոխարեն տեղադրել օգտագործված պահածոներից հավաքած լարային արգելափակոցներ:

2. Մարտական դիրք ներթափանցած դիվերսիոն-հետախուզական խմբի կողմից նռնականետով կրակ վարելուն և նռնակ նետելուն խոչընդոտելու նպատակով՝

մարտական դիրքի թևեևում և թիկունքում կացարանից մինչև 80մ շառավղով (ըստ դիրքի առանձնահատկությունների) կահավորել եռաշարք փշալարային արգելափակոց (ցանկապատ) համակցված լարայինի հետ՝ համաձայն ուղեցույցի պահանջների: Հնարավորության դեպքում 3-րդ շարքը սարքավորել 1,7-1,8մ բարձրությամբ:

3. Հակառակորդի կողմից առաջին դիտակետի վրա շարունակական կրակ վարելու դեպքում, անընդմեջ դիտարկումն ապահովելու և անվտանգ ծառայություն կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով երկու փակ կետից հակառակորդի ուղղությամբ անվտանգ կրակ վարելու նպատակով՝

մարտական դիրքերում նպատակահարմար է կառուցել երկրորդ դիտակետ-կրակակետ:

4. Մարտական դիրք ներթափանցած դիվերսիոն-հետախուզական խմբին, դիտորդի դիրքի համեմատ մոլորեցնելու նպատակով՝

կացարանի (գետնատնակի) մոտ կացարանի դիտորդի համար կառուցել երկու բաց դիտակետ (խրամախորշ, խրամաբջիջ՝ արևից և անբարենպաստ եղանակից պաշտպանված), հարմարեցված հակառակորդի հանկարծակի հարձակմանը դիմակայելու համար, նրանցից մեկում տեղադրելով խրտվիլակ:

5. Կացարանից անձնակազմի (արթուն և հանգստացող հերթափոխների) անվտանգ դուրս գալն ապահովելու և պաշտպանություն զբաղեցնելու նպատակով՝

կացարանում (գետնատնակում) լրացուցիչ ըստ հնարավորության ունենալ պահեստային ելքեր, պատուհանները սարքավորել հականռնակային ցանցերով, մուտքի դիմաց 2-3մ հեռավորության վրա սարքավորել 1,2մ բարձրությամբ պատնեշներ (քարից, անիվներից, փայտից, հողով լցված պարկերից):

6. Գիշերային ժամանակահատվածում ներթափանցած հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերին, ցերեկային ժամերին հակառակորդի դիպուկահարներին մարտական դիրքի պահպանման սահմանների և դիտորդի ծառայության վայրի կրման համեմատ մոլորեցման նպատակով՝

մարտական դիքերում ունենալ ոչ պակաս 2-3 խրտվիլակ, որոնցից երկուսը պահել առաջնագծում, մեկը կացարանի մոտ, դիրքի փոխումը միաժամանակ դիտորդների հերթափոխի հետ:

7. Ըստ անհրաժեշտության կրակով յուրային գրոհող խմբերին աջակցելու և կորցրած դիրքը վերականգնելու նպատակով՝

առաջնային գծում առավել «վտանգավոր» մարտական դիրքերի թիկունքային հատվածում, տեղանքի առանձնահատկություններից ելնելով կահավորել դիրքեր՝ ՀԱՆ-17, ՀՀՆ-9, խոշոր տրամաչափի գնդացիրների համար խրամախորշերով (խրամաբջիջներով):

8. Անտառային տեղերում նախատեսել և սարքավորել հակահետևակային արգելապատնեշներ (սարքավորվում է 15սմ ոչ պակաս հաստությամբ ծառերից, որոնք կտրելով, խաչաձև գցվում են դեպի հակառակորդի կողմը, առանց կոճղերից առանձնացնելու, փաթաթվում փշալարով կամ փշոտ թփուտներով):

Անհրաժեշտության դեպքում, առանձին տեղերում (խանգարող, խոչընդոտող) տարածքը մաքրել խոտածածկույթից:

Փշալարային ցանցեր բարձր ցցերի վրա

Բարձր ցցերի վրա փշալարային ցանցերը սարքավորվում են 3-5 շարքով, 1-1,8մ բարձրությամբ ցցերի վրա, որոնք շախմատային կարգով ամրացվում են և փաթաթվում

փշալարով այնպես, որ ստացվի 3-5մ լայնությամբ և 1,2մ բարձրությամբ տարածաչափական ցանց:

Ցցերի արտաքին շարքերը փաթաթվում են 5 փշալարային կապով՝ 3 հորիզոնական, 2 անկյունագծային: Ներքին շարքերը և շարքերի արանքներում կատարվում են 3 կապ՝ 2 անկյունագծային, 1 հորիզոնական՝ վերևից:



Փշալարային ցանցեր ցածր ցցերի վրա

Ցածր ցցերի վրա փշալարային ցանցերը սարքավորվում են 6մ լայնությամբ: 70սմ երկարությամբ ցցերը շարքերով ամրացվում են մեկը-մյուսից 1,5մ հեռավորությամբ, երկրի մակերևույթից վեր թողնելով 25սմ: Ցցերի յուրաքանչյուր շարքը և շարքերի արանքներում փաթաթվում են 2 կապ փշալարով, որոնցից մեկի վրա պատրաստվում է օղակ:

ա. փշալարային ցանցեր բարձր ցցերի վրա.

3 շարքով 100մ փշալարային ցանցի սարքավորման համար անհրաժեշտ է 25 փաթեթ փշալար, 100 հատ ցից (ե/բ սյուն), 50կգ մետաղական ամրակապ (սկոբա),

բ. փշալարային ցանցեր ցածր ցցերի վրա.

6մ լայնությամբ 100մ փշալարային ցանցի սարքավորման համար անհրաժեշտ է 50 փաթեթ փշալար, 100 հատ ցից (ե/բ սյուն), 30կգ մետաղական ամրակապ (սկոբա):



Փշալարային պարույրներ

Փշալարային պարույրները տեղանքում տեղադրվում են 2-3 շարք լայնությամբ և 2-3 հարկաբաժնով բարձրությամբ: Տեղադրելու ժամանակ պարույրներն իրար են միակապվում մետաղալարով և ցցերով ամրացվում են հողին: Տեղադրելուց հետո յուրաքանչյուր պարույր իրենից ներկայացնում է 10մ երկարությամբ և 90սմ բարձրությամբ գլան: Պարույրները կարող են պատրաստվել դաշտային պայմաններում ձեռքով:

Մարտական դիրքերում տեղադրվում են նաև հակահետևակային երկեղջյուրներ, պահածոների դատարկ տարաներով և լարերով սարքավորված վարագույրներ, քողարկված ապակիներ, որոնց տակը տեղադրվում են դեպի վերև ուղղված մեխերով տախտակներ, անտեսանելի (թույլ տեսանելի) լարերով խրամատի երկկողմ պատերի մեջ ամրացված պահածոների դատարկ տարաներ, դիտակետերի դիմաց նռնականետերի կրակից պաշտպանող հականռնակային ցանցեր:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով դիվերսիոն-հետախուզական խմբերի նախապատրաստման և կիրառման հարցերը, կարելի է եզրահանգել, որ դիվերսիոն-հետախուզական խմբերի ակտիվ գործունեության ընթացքում կխաթարվի հակառակորդի զորքերի ղեկավարումը, նա կզրկվի ռազմավարական նշանակություն ունեցող զինատեսակներից, մարտի ընթացքում զորքերի համակողմանի ապահովման համար անհրաժեշտ նյութական միջոցներից, նրա զինված ուժերի անձնակազմի և բնակչության մոտ կստեղծվի բարոյահոգեբանական ծանր վիճակ: Երկարատև դիվերսիոն գործողությունների ուղարկված առաջին հերթի դիվերսիոն-հետախուզական խմբի գործողությունների արդյունքում հակառակորդ երկիրը կարող է հայտնվել տնտեսական, էկոլոգիական, էներգետիկ ճգնաժամերի առջև, ինչի հետևանքով նա կկորցնի իր ռազմական և տնտեսական գերակշռությունը: Այսինքն՝ մարտական գործողություններից (պատերազմից) առաջ, դրա ընթացքում և ավարտից հետո դիվերսիոն-հետախուզական խմբերի կողմից կատարվող գործողություններն ուղղակիորեն կազդեն գլխավոր ուժերի առաջադրանքի արդյունավետ կատարման վրա:

Պաշտպանական մարտի հիմնական բաղկացուցիչ մասերից մեկը պետք է համարել հակառակորդի օդադեսանտների և ԴՀԽ-ների դեմ պայքարը, որի հիմքն է հանդիսանում հրամանատարի պաշտպանական մարտի որոշումը: Դեսանտների և ԴՀԽ-ների դեմ պայքարի անմիջական կազմակերպիչը և իրականացնողը գնդի հրամանատարն է կամ նրա տեղակալը:

Անհրաժեշտ է փնտրել հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարելու նոր մոտեցումներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ պայքարի բարելավման աշխատանքները պետք է տարվեն մի քանի ուղղություններով: Հիմնականում.

առաջին - հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարի տեսական և գործնական զարգացում,

երկրորդ - զորամիավորումների և զորամասերի հաստիքային կատարելագործում և համապատասխան կազմավորումների ստեղծում՝

- տարածքը բաժանել հատվածների (շրջանների) միջինը 50-100 քառ. կմ մակերեսով, յուրաքանչյուր հատվածում նշանակել մեկ հատուկ նշանակության խումբ,
- ավելացնել հատուկ նշանակության ուժերը,

երրորդ - հրամանատարության և շտաբների հակառակորդի ԴՀԽ-ների դեմ պայքարի կազմակերպման աշխատանքային մեթոդների բարելավում,

չորրորդ - մարտական դիրքերի հակադիվերսիոն առումով մշտական լրակահավորում, ժամանակակից հետախուզական տեխնիկական միջոցներով ապահովում,

հինգերորդ - համազորային ստորաբաժանումների ուսուցանում հակառակորդի հատուկ նշանակության և հետախուզական ստորաբաժանումների հետ մարտ վարելուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչություն՝ «Հակառակորդի օդային դեսանտների և դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարի դրույթներ (ուսումնական ձեռնարկ)», Երևան - 2010թ.:

2. «Մարտական կանոնադրություն երկրորդ մաս», Երևան - 2011թ.:

3. «Մարտական կանոնադրություն երրորդ մաս (ուսումնական ձեռնարկ)», Երևան - 2006թ.:

4. ՀՀ ՊՆ 04.03.2014թ. N 050 հրամանից քաղվածք: